

## Հակոբ Պետրոսյան

### ԻՄ ԴԱՅՐԵԼԱԶՐԿՎԱԾ ԾՆՈՂՆԵՐԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Ես, որ ներկայացնում եմ ծնողներիս պատմածները, ծնվել եմ 1928 թ. Բարում քաղաքում: 1948 թ. ավարտել եմ Բարումի հայկական դպրոցը, ընդունվել եմ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1953 թվականին ավարտելով համալսարանը՝ դասավանդել եմ հայոց լեզու և գրականություն Հրազդանի Սոլակ գյուղի, ապա Բարումի հայկական դպրոցներում: 1960 թ. մինչև 2010 թվականը աշխատել եմ Երևանի պետական համալսարանի հրատարակչությունում որպես խմբագիր, գիտավոր խմբագիր: 2010 թվականից խմբագրում եմ համալսարանի պատմության ֆակուլտետի «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդեսը: Հրատարակել եմ «Գեղամ Տեր-Կարապետյան» («Մշո Գեղամ»), «Մեյլան, կյանքը և գործը» մենագրությունները, «Երևանի պետական համալսարանի հրատարակչության մատենագիտությունը», կազմել եմ (Ա. Մադոյանի հետ) Սկրտիչ Խրիմյանի (առաջին անգամ խորհրդային Հայաստանում), Շեքսպիրի ընտիր երկերի միհատորյակները, Մշո Գեղամի ստեղծագործությունները՝ Երկու հատորով): Գրել և տպագրել եմ պատմվածքներ, բանաստեղծություններ, հուշեր, գիտական հոդվածներ: Բանասիրական գիտությունների թեկնածու եմ<sup>1</sup>: Ունեմ երեք զավակ՝ Արշալույս (անգլերենի դասախոս Երևանի պետական համալսարանում), Արաքել (ջութակահար Հայաստանի պետական կամերային համույթում), Արմենուհի (բանասեր, գիտ. թեկնածու) և 4 քոռ:

Հակոբ Պետրոսյան

**Մշո դաշտ, Սոխգոմ, Եղեռն, որբանոցային կյանք, Խնուս, Քաղքիկ գյուղ,**  
**Մինասի Մանուկ, տարագրյալ, Ալեքսանդրապոլ**

**Հայրս՝ Բաղդասար Գասպարի Պետրոսյան:** Ինչպես տարագիր բոլոր ընտանիքներում, մենք՝ Երեխաներս, մանկական տարիներից արդեն տեղյակ էինք մեր ծնողների ողբերգական անցյալին: Այդ ընկալումները մանկական չիմացության և միամտության սահմաններից չին անցնում: Հետագայում ավելի խոր գիտակցեցինք, թե մենք ով ենք և ինչու էինք գտնվում այս տարաշխարհում, ոչ թե մեր ծնողների հայրենիքում: Այդ ընկալմանը նպաստում էին հորս և մորս տխուր պատմությունները իրենց երկրից, մանկությունից և որբանոցային կյանքից: Բացի այդ, մանկուց ապրում էինք այստեղ գաղթած մշեցիների միջավայրում ու բարեկամական կապեր պահպանում նրանց հետ՝ տխուր և ուրախ օրերին, ամեն նոր տարի հայրենակիցները մեզ

<sup>1</sup> Այս տեղեկությունները հաղորդում եմ՝ նշելու Եղեռնից հետո մեր գերդաստանի վերազարթոնքի իրողությունը:

հետ էին կիսաթուրքական-կիսահունական-կիսավրացական այդ քաղաքում, որտեղ մենք մեծացանք:

Շարադրում եմ այն, ինչ լսել եմ հորիցս ու մտապահել եմ.դա դարձել է իմ կենսագրության ու աշխարհայացքի բաղկացուցիչ մասը:

Երկրում Մշո դաշտի (Սուշ քաղաքին մոտ) իրենց Սոխգոն գյուղում նրանք ճանաչված էին իբրև Հազո՞-Պետրոսի տներ. մի մասը գրվում էին Հակոբյաններ, մյուլսը՝ Պետրոսյաններ: Սոխգոնը 120 տուն և հազար բնակիչ ուներ, որից մի քանի տուն քրդեր, որոնք հայերեն էին խոսում: Պետրոսի գերդաստանի (Պես էին անվանում) զավակներն էին Հակոբը, Գասպարը, Բարսեղը, Ապետը և Խումարը: Գասպարը, որ հորս հայրն էր, պանդխտել էր Թիֆլիս, և լուր չունեին նրանից: Բարսեղը մինչև կոտորածները պանդխտել էր Ամերիկա (Ֆրեզնո): Հակոբը՝ մեծ եղբայրը, և Ապետը գյուղում էին, խումարը ամուսնացել էր գյուղի Աղամյանների Հովսեփի (Հովսոն) հետ: Տանը կային երկու տղա երեխաներ՝ Բաղդասարը և Ապետի զավակ Առաքելը: Բաղդասարին խնամում էր մեծ հորեղբայր Հակոբը, որը ամուսնացած էր, բայց երեխս չուներ: Հորեղբայրը առանձին խնամքով էր վերաբերվում պանդուխտ եղբոր զավակին՝ Բաղդասարին, որի մայրը նորից ամուսնացել էր: Մի անգամ տուն գալիս նա տեսնում է, որ տղան տխուր է. ինանալով, որ կինը է նեղացրել, շատ խիստ պատժում է նրան: Զմեռվա կեսին, ծյուն ու բջին եթե Բաղդասարը խնձոր էր ուզում, հորեղբայրը դժվարությամբ, բայց կատարում էր նրա ցանկությունը:

Այսպես ապրում էին թուրքական անտանելի կեղեքման պայմաններում իրենց ավանդական ու բարոյական նիստ ու կացով մինչև 1915 թվականը:

Հակոբ հորեղբայրը ջրաղացպան էր, նաև լավ արհեստավոր: Եղեռնի օրերին ամբողջ գյուղը քարութանդ արեցին ու թալանեցին: Ամիսնա կոտորեցին հայ բնակիչներին, որոնց մի մասը, փախչելով գյուղից, ապաստանեց Քանա սարում: Ամենաքստանելին այն էր, որ ջարդարար թուրքերը և քրդերը չքավարարվեցին կոտորածներով: Փամփուշտ խնայելու համար տներում մնացած կանանց ու երեխաներին լցնում էին գյուղի մարագները ու այրում, ինչպես այրեցին Ալիզոնան գյուղի մարագներում Ս. Կարապետ վանքի երեսունամյա վանահայր, վարդապետ ու առաջնորդարանի փոխանորդ Վարդան Վարդապետին՝ Մուշի մի խումբ քաղաքցիների հետ: Այսպես, Սոխգոնի մարագներում ողջակիզվեց հորեղբայր Ապետի ընտանիքը՝ կինը և աղջիկները, փրկվեց միայն 9-ամյա Առաքելը՝ մարագի մեղ պատուհանից փախչելով, որ հորդորել էր մարագում գտնվող ծեր նանեն: Փախչող տղայի հետևից կրակել էին, բայց վրիհակել: Սպանել էին գերդաստանի մեծին ու փոքրին: Արհեստավոր Հակոբ հորեղբայրը, հայտնի չէ ինչ կերպ, հաջողվել էր փրկել փոքրիկ Բաղդասարին ու թաքնվել: Այդ խառը ժամանակներում երեխայի հետ հայտնվում է Մուշ քաղաքում: Նրանք պատահաբար Զաֆար աղայի տանը, որը ծանաչում էր հորեղբայր Հակոբին և բարյացական էր հայերի նկատմամբ, գտնում են Առաքելին:

1916 թ. ձմռանը հայ կամավորներն ու ռուսական զորքերը գրավում են Մուշ քաղաքը: Իրենց գյուղերից փախած ու ողջ մնացած բնակիչները, Սասունի փախստականները գալիս են Մուշ: Հակոբ հորեղբայրը «ջաղացպանություն» է անում՝ երկու

Երեխաներին պահելու համար: Յայրս պատմում էր, որ իր հորեղբայր Ապետը Քանա սարից ծափյալ գյուղ է Վերադաշնում՝ տեսնելու, թե իր ընտանիքը ի՞նչ եղավ և օգնություն (հաց) տանելու սար, քրդերի կողմից նկատվում է և իր տան շեմի առաջ գնդակահարվում, այն Ապետը, որ երկանքի քարերը գյուղի մի ծայրից ձեռքով տանում էր մյուս ծայրը, այն Ապետը, որին չին համարձակվում թթու խոսք ասել կամ դիմադրել: Ասում են, որ նրա հավատարիմ շունը օրերով մնացել է տիրոջ դիակի մոտ: Ապետի հորաքրոջ աղջիկ Մարիամը, որ նույնպես վիրավորվել էր քրդի գնդակից և որի խորք մորը, Երեխաներին սպանել էին, հետևյալն է պատմում. «Ապետը շատ քաջ, համարձակ էր: Մի անգամ գյուղի ճանապարհին հանդիպում են 5-6 հոգի, որոնք փորձում են հարձակվել նրա վրա: Ապետը բոլորին կապում է իրար և տանում գյուղապետի մոտ: Քրդերը գանգատվում են, թե այդ հայր իրենց ծեծել է: Գյուղապետը Ապետին ազատ է արձակում, նրանց նախատում է, որ մի մարդու չեն կարողացել հաղթել:

Որոշ ժամանակ անց ռուսական զորքը թողնում է Մուշը և հեռանում: Քաղաքից հեռանում են, ով ինչպես կարող էր:

Հորեղբայր Յակոբը չափազանց մտահոգված էր իր Երեխաների՝ Բաղդասարի ու Առաքելի ճակատագրով, որոշում է ինչ գնով էլ լինի, նրանց փրկել և հասցնել Արևելյան Յայաստան: Եվ այդ նպատակին հասնելու համար նրան օգնում է իրենց գյուղու ծանոթ քրդերից մեկը, որ խոստանում է կատարել հորեղբոր իղձը, եթե նա օգնի պաշտպանվելու ռուս գինվորներից: Հորեղբոր և երկու որբերի գողգոթան Մշո դաշտից Արևելյան Յայաստան չափազանց բարդ էր ու արհավորալից: Պիտի անցնեին Երկար ու ծիգ ճանապարհի խոչ ու խութերը, վտանգավոր, արյունամած դաշտերն ու բնակավայրերը, ուր թուրք և քուրդ բառերը սարսափով էին հնչում: Ես չեմ իիշում, թե որ ճանապարհով են նրանք ընթացել, քանի օր ու ի՞նչ անակնկալեր ու դժվարություններ են կրել: ճանապարհին ստիպված են եղել թաքնվել գետնի տակ թուրքական զորքից ու քրդերից, որոնք երկաթյա շշերով փորփրում էին գետինը, հողը՝ հայտնաբերելու հայ փախստականների: Բարեբախստաբար այս անգամ նրանց հաջողվում է խուսափել մահացու վտանգից: Յակոբ հորեղբայրը իր խոստումը չի կարողանում կատարել: Փախստականների մեջ էր խազալը Յակոբ հորեղբոր՝ Աղամյանների տուն հարս գնացած քրոջ տալը: Նա ճանաչում է քրդին, որը կոտրածների ժամանակ սպանել էր իր մեծ եղբայր Յովսեփին (Յովսոյին): Եթե Յակոբը մի քանի րոպե հեռանում է քոչից՝ խազալը, օգտվելով հարմար պահից, սպանում է եղբոր դահճին:

1917-1918 թթ. Յայաստանի համար տնտեսական ու սոցիալական դժվարագույն տարիններ էին. նյութական պակասություն, սով, հիվանդություն, պատերազմ, արևանտահայ գաղթականություն, գործազրկություն: Ապետը, գոյատեւլը աներևակայելիորեն բարդ էր: Երևանում Ամերկոմը բացել էր որբանոցներ: Սովից փրկելու համար այստեղ է հանձնում իր Երեխաններին Յակոբ հորեղբայրը: Ինքը ապրում է գաղթականներին հատկացված խցում, զբաղվում բեռնակրությամբ, մոտիկ անտառներից փայտ կրում ու վաճառում: Մի անգամ փորձում է Երեխաններին որբանոցից հանել, բայց մի ամիս պահելով՝ համոզվում է, որ դա անհնար է և վերադարձնում է որբանոց: Յրաժեշտ է տալիս նրանց, պատգամում է իրարից չիեռանալ, ջերմագին համբուրում է

իր գերդաստանի մատաղ ծիլերին ու հեռանում է հավետ (պատմվածք եմ տպագրել այդ մասին: Տես «Հանդես Երևանի համալսարանի», «Բաժանում», 1994, էջ474-78): Ոչ ոք չիմացավ, թե ինչ եղավ Հակոբ հորեղբայրը: Բարեբախտաբար, նկարվել է իր զավակների հետ: Ես հիշում եմ այդ նկարը, բայց Համաշխարհային երկրորդ պատերազմից առաջ պատվեր վերցնող լուսանկարիչները Մոսկվա տարան մեծացնելու: Սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմը, և նկարն էլ կորավ:

Մինչև 1926 թվականը Բաղդասարն ու Առաքելը մնացին որբանոցում, որտեղ սովորեցին գրել ու կարդալ: Ապա, ինձնալով, որ Բաթումում են ապրում երկրոյից գաղթած իրենց ազգականները, մասնավորապես հորս հորաքրոջ աղջիկ Մարիամի ընտանիքը, եկան Բաթում:

Բաթումում էին բնակվում Պետրոս պապի եղբոր՝ Պողոսի տղա Մութքայելը և մյուս եղբոր՝ Գրիգորի տղա Թումասը, հիշյալ Յովսեփի (Յովսոյի) տղա Սեղրակը (Սեթոյ) իրենց ընտանիքներով: Տղաները արդեն երիտասարդներ էին և ամենից ավելի կապված էին իրենց հորաքրոջ աղջկա՝ Մարիամի հետ: Սեղրակն էլ Մարիամի փոքր եղբայրն էր: Սենք Մարիամին հորաքրոյր էինք անվանում: Նա մեր նկատմամբ շատ բարյացակամ էր և ուշադիր ու մեր տունը համարում էր իր քեռու տուն: Եվ մենք մինչև վերջ հաստատորեն կապված մնացինք հորաքրոջ զավակներ Աղավնուն, Յովսանին, Դանիելին, Աստղիկին, որոնք այլևս չկան: Այնքան ջերմագին էր նրանց հարազատությունը, որ նահվանից առաջ Մարիամ հորաքրոյրը ուղեց, որ իր աճյունը անփոփեն Առաքելի ու Բաղդասարի կողքին:

Առաքելն ու Բաղդասարը առանձնապես ոչինչ չունեին. ապրում էին մի փոքրիկ սենյակում: Բաղդասարը, ինչպես բոլոր մշեցիները, բեռնակիր էր, Առաքելը սովորել էր հյուսնություն և աշխատում էր խորհրդային շինարարության հիմնարկներից մեկում: Երկու եղբայր իրարից անբաժան էին ու համերաշխ: Երբ մենք մեծացանք, նոր միայն ինացանք, որ նրանք հորեղբոր տղաներ են: Բաղդասարը ավելի հեզ, խոնարի բնավորություն ուներ, Առաքելը բանիմաց ու աշխույժ էր: Հակոբ հորեղբոր պատվիրանի համաձայն միշտ իրար հետ էին, անբաժան: Բաղդասարի ամուսնությունից հետո էլ միասին էին ապրում:

Բաղդասարը ամուսնացավ 1927 թվականին՝ Խնուսի Քաղքիկ գյուղից Մարգարիտի հետ, երբ վերջինս Լենինականի ամերիկյան որբանոցի մի խումբ որք աղջիկների հետ Բաթումից նավով գնում էր Սուխում՝ աշխատանքի: Բաղդասարը հավանեց Մարգարիտին ու նրա ճամպրուկը վերցնելով՝ նրան տուն տարավ:

Սեկ տարի հետո ծնվեց նրանց ավագ որդին, որին անվանեցին իրենց բազմաչարչար ու ազատարար հորեղբոր ամուսնով՝ Հակոբը: Ապա 1929 թ. ծնվեց Պետրոսը (պապի անունը), 1930-ին՝ Արշալույսը (Առաքելի՝ մարագում ողջակիզված քրոջ անունը): Լավ-վատ ապրում էին, կարծես երեխաների ծնունդով վերակենդանանում էին եղեռնի զոհերի հիշատակները: Բայց ցավը, տառապանքը այնքան խորն էր ու անանցանելի, որ տարագիր հայերը շարունակում էին ողբալ իրենց հարազատներին, հիշել նրանց. Երկրի կարուտը մաշում էր բոլորին: Մշեցիների ու մյուս տարագրյալների մեջ մասը ապրում էր ժամանակավոր կացարաններում, անհարմար տներում, խոր նկուղներում, սեփականություն ծեռք չին բերում այն խորը հավատով ու հույսով,

բացվելու են Երկրի դռներն ու իրենք վերադառնալու են հայրենիք: Բայց այս հույսը ժամանակի ընթացքում խամրեց, չիրականացավ:

1936 թ. ամռանը Երկար հիվանդությունից հետո վախճանվեց Առաքելը 28 տարեկանում՝ պատվախնդրությամբ ու հայրենասիրությամբ աչքի ընկնող մշեցի Երիտասարդը՝ հետևանք խորհրդային քանտային կյանքի (Երկու տարի քաղաքանտարկյալ էր) և խոնավ շինխրամատներում իբրև հյուսն աշխատելու: Սա վերապրող մշեցի Երկրորդ Երիտասարդն էր, որ խորհն կակիծով կորցնում էր Բարումի հայ համայնքը: Բաղդասարը մնաց իր կնոջ ու Երեք Երեխաների հետ: Անցավ ժամանակ: Ակսվեց Համաշխարհային Երկրորդ պատերազմը:

Հիվանդանալուց առաջ Առաքելը նշանվեց սոխգոնցի Մանուկի դստեր՝ Ազնիվի հետ, բայց չհասցրեց անուսանանալ: Առաքելը ուներ մշեցի ընկերներ, որոնց հետ հաճախ էր հանդիպում նաև մեր տանը. ունեին նվազախումբ: Սոխգոնցի Արտաշը նվազում էր թառ, Առաքելը՝ բլուլ (փող) և քյանանչա, մյուսների անունները չեն հիշում: Ես Արտաշի մոտ եմ սովորել թառ նվազել: Դժբախտաբար, Համաշխարհային Երկրորդ պատերազմից Արտաշը չվերադարձավ: Ուներ Երկու տղա՝ Սուրիկը և Զորիկը, տիկիններ՝ Արուսյակ, որոնք պատերազմի ժամանակ Բարումից տեղափոխվեցին Երևան:

1941 թ. պատերազմին մասնակցեց նաև հայր՝ Բաղդասարը, թողնելով տանը հինգ Երեխա, մեծը՝ 13 տարեկան, ես էի: Մի կերպ ապրեցինք հինգ տարի: Մայրս աշխատում էր, ես նույնպես, և դպրոց էի գնում: Աստված պահեց հորս, և նա վերադարձավ պատերազմից: Բայց մենք անգնահատելի կորուստներ ունեցանք. պատերազմյան և հետպատերազմյան նյութական աննպաստ պայմանների պատճառով. անբուժելի հիվանդությունից մահացան Արշալույս քույրս (1948 թ.) և Եղբայր՝ Պետրոսը (1949 թ.): Ես գնացի Երևան սովորելու համալսարանում (1948 թ.): Ընտանիքով տարանք նաև ետպատերազմյան դժվարին փորձությունները: 1971 թ. կյանքից հեռացավ հայր՝ Բաղդասարը՝ մեզ թողնելով անսահման կարոտ և սեր մեր բնիկ հայրենիքի Տարոնի, Մուշի նկատմամբ: Այսպես վերջացավ Եղեռնի հետևանքով որբացած Երկու Երեխաների Երկրային կյանքը՝ ծովվելով մեկ ու կես միլիոն անմեղ նահատակներին:

**Սայրս՝ Մարգարիտ Ավետիսի Պետրոսյան:** 1972 թ. (մարտ ամիս) իմ խնդրանքով նայրս գրի առավ նախապես մեզ պատմած հիշողությունները որբանոցում սովորած հայերենով, որոնք մեզ համար մասունքի արժեք ունեն: Իր տառապագին մանկությունից դրվագները պատմում էր բանավոր խոսքին յուրահատուկ երանգով, որ ավելի տպավորիչ էր, քան գրավոր շարադրանքը:

Սայրս՝ Մարգարիտ Ավետիսի Մինասյանը (Պետրոսյան), ծնվել է Արևածյան Հայաստանի Խնուսի շրջանի Քաղքիկ գյուղում շրջանում հայտնի նշանավոր Մինասենց Մանուկի գերդաստանում (տես Ալիխանյան, Հարք-Խնուս), որը նահատակվել էր կոտորածներից ութ տարի առաջ: Մանուկի զավակն էր գյուտարար Միսաքն էր:

«1915 թ. պատերազմին (Առաջին համաշխարհային պատերազմ – Հ. Պ.) ես ութ տարեկան էի: Ապրում էի Խնուսի գավառի Քաղքիկ գյուղում իմ ծնողների հետ, որոնք բավականին մավանի մարդիկ էին: Ազատ թռչունի նման էինք՝ անհոգ և առողջ: Բայց շուտով գրկվեցի ծնողներիցս, և ես, քույրս ու Եղբայրս մնացինք մեր տատի ու

հորեղբորս խնամքի տակ մեր սեփական տան մեջ: Մեր տունը շոշի (ճանապարհ) մոտ էր, բոլորն այդտեղով էին անցնում: Տան մոտ կար երեք բարդի ծառ և բնական աղբյուր, գուռ էին սարքել, որ անասունները ջուր խմեն: Յորեղբոր տղա Դավիթենց (հետագայում ապրում էր Թիֆլիսում) տան պատը և մերը նույն էր: Փոքր հորեղբորս անունը Նազար էր: Կոտորածի ժամանակ թաքնվում էր հարևան քրդի տանը: Մեր գեղի քրդերը մեզ ձեռք չեն տվել, բայց գիտեին, որ մեզ կոտորելու են: Ծանոթներին գաղտնի հայտնել էին, որ իրենց գլխի ճարը անեն: Երբ ասացին, որ հայ պահողներին պատժելու են, Նազարը ուզեց փախչել արտերի մեջ, հետևից հրացանով խփեցին, ես ճղավեցի (բղավեցի) քրդերը սաստեցին: Համբարձման օրեր էին: Նազարը նոր ամուսնացած էր: Դեռ երեխս չունեին: Կինը խնուսի Դարամիկ գյուղից էր:

Աստված իմ, ինչու գրկեցիր ինձ իմ հարազատներից:

Մի գեղեցիկ առավոտ տանից դուրս եկանք բակ, տեսնենք, թե ինչ հրացանի պայթյուն էր և իրարանցում. ամեն մեկը իր գլուխս կորցրած՝ դես ու դեն էր ընկնում, որ մի ճար գտնեն, գյուղից հեռացնեն կանանց ու երեխաներին: Բայց դժբախտաբար մեզ բոլորիս խարելով՝ քրդերը տարան իրենց գյուղ՝ իբրև մեզ պաշտպանում են; Դրանից հետո սկսեցին մեր ամբողջ գյուղը թալանել: Մեզ էլ իրենց տներում պաշտպանեցին մի շաբաթ ու հանկարծ հայտնեցին, թե գնացեք ձեր գլխի ճարը տեսեք, մեզ հրամայել են, որ եթե մի հայ գտնենք ձեր տներում, ձեզ էլ հետները կվառեն: Ստիպված դուրս եկանք այդ գյուղից և ինքնագլուխս, ով որտեղ կարող էր, գնաց: Ես, որ ամենամեծն էի, բռնեցի քրոջ՝ Անահիտի և եղբորս՝ Յովհաննեսի ձեռքերը ու եկանք մեր գյուղ՝ Քաղքիկ: Յորական տատիկս տանն էր մնացել: Մեզ վերցրեց և գնացինք մոտիկ Խալչառուշ գյուղը, որտեղ ապրում էր մեր հորաքույրը: Տանապարհին տատս ուզում էր իրեն գցել գետը, բայց մենք լաց եղանք, բռնեցինք փեշերից և թույլ չտվեցինք: Այդ գյուղում տատս մահացավ, կնիկները թաղեցին. տատիս անունը չեմ հիշում, Թռչնոցի էին ասում: Մենք մնացինք բոլորովին անտեր: Այստեղից քոչերի հետ ելանք գնացինք, մենք էլ չգիտեինք, թե ուր: Իր պետք է գնանք Խնուս: Գետը հորդացած էր, կամուրջ չկար, մեզ չփլաղցրին, մտանք ջուրը: Կանայք, բռնած մեր ձեռքերը, տանում էին: Այստեղ ես կորցրի քրոջս ու եղբորս: Եկանք Զառլումա գյուղը, որտեղ կոտորածից առաջ ամուսնացել էր մայրս: Նոր ամուսնությունից ուներ երեխսաներ:

Ամառվա մի շոգ օր էր: Երկար ճանապարհից հետո քոչք կանգնեցրին, նստեցինք հանգստանալու: Քաղցը մի կողմից, հոգնածությունը՝ մյուս կողմից, նստեցինք թե չե, գլուխս դրեցի գետնին ու քնեցի: Զարթնեցի ծարավից: Տեսա՝ ոչ ոք չկա, միայն ես, երկինքը և գետինը: Գնացի նոյն ճանապարհով, չորս կողմը միայն լեռներ էին: Խսկույն նոյն ճանապարհով վերադարձած: Արդեն մութն ընկնում էր, իսկ ես ծարավ էի ու սոված: Ճանապարհին մի մեծ քար կար. մտա քարի տակ ու քնեցի մինչև հաջորդ օրը, երբ արևը թեքվել էր արևմուտք: Ակսեցի ջուր փնտրել: Արթնացա, մեկ էլ տեսա մի երեխս ինձ է կանչում: Գնացի այդ ձայնի ուղղությամբ: Նա ինձ ջրի տեղը ցույց տվեց. պաղ աղբյուրից մի լավ խմեցինք: Ինձ տարավ իր մոր և քրոջ մոտ, որոնք թաքնվել էին մասուրի մացառների մեջ: Նստեցինք, հանգստացանք: Մի քսան րոպե անցել էր. լսեցինք ինչ-որ ձայներ: Դու մի ասա, այդ ճանապարհով անցնում էին թուրք ասկյարներ:

Մեզ վերևից նկատել էին և եկան ուղիղ մեզ մոտ: Յարց ու փորձ արեցին: Մեզ հանեցին մացարներից: ճանապարհին ուղտեր կային, գնում էին քաղաք (Խնուս): Վրաներ խփեցին. գիշերը մնացինք այդ վրանների տակ, իսկ առավոտյան շուտ դուրս եկանք միասին, բայց որովհետև մենք չկարողացանք քայլել ուղտերի հետ, մնացինք մի գիշեր էլ ճանապարհին:

Առավոտյան շարունակեցինք մեր ճանապարհը: Յանկարծ մեր դեմ ելավ մի ցնցոտիավոր քուրդ: Նա այդ կնոջից ոսկի էր ուզում, կինը ասում էր, որ չունի: Քուրդը չհավատաց, կնոջ երեխաները սկսեցին լաց լինել: Քուրդը իր մոտի բահով այնպես խփեց կնոջ տղայի վզին, որ խեղծ տղի քիթ ու բերանից արյուն հոսեց: Քուրդը տեսավ, որ խկապես կինը փող չունի, արածից փոշնանեց ու հարցրեց. «Սովա՞ծ եք» և մի կտոր հաց տվեց ու գնաց:

Մենք շարունակեցինք մեր ճանապարհը: Յասանք Խնուսի Սայլու գյուղը, որ մի կիլոմետր հեռու էր քաղաքից: Այդ օրը մենք քնեցինք մի ավերված տան մեջ: Առավոտյան գնացի հաց մուրալու տնից տուն: Զգիտեմ, ինչպես հանկարծ հանդիպեցի քորչ ու եղբորս, վերցրի բերի մեզ մոտ: Ամեն օր գնում էի քաղաք, հաց էի հավաքում, բերում և մի կերա ապրում էինք: Բայց որովհետև ինձ շատ դժվար էր ամեն օր քաղաք գնալ, ստիպված եղանք գալ քաղաք: Եենց նոր էինք քաղաք եկել, մեզ բռնեցին թուրք ասկյարները, տարան ձորի վերևում գտնվող բանտը: Ամեն օր ժամը չորսին դուրս էին հանում, ջուր էինք խնում, երկու հարյուր գրամ հաց էլ տալիս էին ամբողջ օրվա համար մինչև մյուս օրը նույն ժամին: Ամառվա շոգ ամիսներ էին. թե՛ սովից, թե՛ կեղտից անհաշիվ էր մեռնողների թիվը: Դիակները հանում գցում էին դուրս, արկից ուղչում էին և քայլայվում:

Տեսան, որ այդպիսով իրենք կտուժեն, խոլերա հիվանդության վտանգ կա, կտարածվի քաղաքում, մեզ թոլորիս բանտից հանեցին, տարան ձորի հայոց եկեղեցին: Ամեն օր ժամը երկուսին մեզ դուրս էին բերում ջուր խնելու. կրանում էինք անասունների նման առվի վրա, գնում հաց ստանում ու նորից խցկում ներս: Այստեղ մահացավ երկու տարեկան Յովհաննես եղբայրս, կանայք թաղեցին ժամի մեջ, ես քնած էի: Երբ զարթնեցի, ասացին. էլ ինչ կարող էի անել, շատ տխրեցի, որ եղբայրս չկա. մնացինք երկու քոյք:

Այդ տարվա օգոստոս ամսին եկան թուրք ծառայողները և մեզ թոլորիս տարան: Ամեն գյուղ մտնելիս մի քանի երեխա թողնում էին և ասում. «Սինչև գանք, ոչ որի չտաք այս երեխաներին, քորչ ու ինձ բաժանեցին տարբեր տներում: Ապրեցինք մինչև աշուն: Իմ տերերը մարդ ու կին էին: Սի օր հորթը տարա արածեցնելու, բայց կորավ: Էլ տուն չմտա վախից: Մեկը ինձ տեսավ, բերեց մոլլայի տուն, ուներ մի տղա ու մի աղջիկ: Այստեղ մնացի մինչև հունվար ամիսը: Երբ ռուսական թոփերի ձայնը լսեցին, նրանք փախան: Երկու օրից վերադարձան:

Սեկ էլ եկան պատրոնտաշներով մեր հայ տղաները. ի՞նչ տղաներ էին, ի՞նչ հայեր: Երեխաներ էին հավաքում: Երկուսը մնացին մոլլայի տանը, ինձ չարոխ կարեցին: Առավոտյան հայ գինվորները առաջարկեցին իրենց հետ գնալ, ես գնացի: Մինչ այդ ոտքերս վերքոտվել էին: Տնական դեղ պատրաստեցին, քսեցին: Լավացան: Տաս օր

մնացինք այստեղ: Զինվորները ինձ բերեցին Խնուսի շտաբ: Մեծը պարոն Բաղդասարն էր՝ բոյով, սպիտակ մազերով: Տաս օր էլ մնացի մեր ծանոթներից մեկի տաճը: Ես մենակ էի: Ապա տարան որբանոց: Նոր շորեր տվին, բուխարի փափախ, երկար գուլպաներ, ճերմակ հաց: Անեն օր պարոն Բաղդասարը գալիս, ստուգում էր:

Մի օր էլ մի ծիավոր Եկավ՝ երկու երեխա ծիու թաճքին. մեկը քոյրս էր՝ Անիկը, ես շատ ուրախացա: Մնացինք Խնուսում մինչև աշուն: Աշնան վերջին ամիսն էր (1916 թ.), իմացվեց, որ թուրքը նորից հարձակվելու է: Լցին մեզ սելերը: Հարամիկի մոտից էինք անցնում, որ մոտ էր Քաղքիկ գյուղին. նայեցի ու լաց եղա, նատեցի ու լաց եղա: Սուրադ (Արածանի) գետի ափով էինք գնում: Բերեցին մեզ Դութադ. բոլորը գետնափոր տներ էին: Եփել էին գարե շիլա: Մի քանի օր այստեղ մնացինք: Ապա տարան Ալեքսանդրապոլի: Երկու ամիս (1917) մնացինք Ալեքսանդրապոլում:

Երեխաներին սկսեցին բաժանել. որին Ախալքալաք, որին Շուշի, իսկ ինձ տարան Զալալողլի (Ստեփանավան), որտեղ շատ չնացինք: Այստեղից էլ մեզ նորից բաժանեցին. բոլոր երեխաներին մի օրվա ուտելու պաշար տվեցին և ճանապարհ դրին դեպի Թիֆլիս:

Վագոններով Եկանք Ղարաքիլիսա: Մի շաբաթ էլ այստեղ մնացինք: Ասացին կարճ ճանապարհով գնանք (թուրքերը բռնել էին երկաթգիծը): Գնացին հետախուզության ստուգելու ճանապարհի անվտանգությունը:

Մուկի պես թրջված եւ վերադարձանք և մի երկու օր մնացինք: Եկանք Ալավերդի: Գնացք չեր գնում Այրում, ճանապարհը փակ էր: Մի կերպ հասանք Այրում: Յումուխաշ ճաշ էին տալիս: Ոտքով Եկանք Սադախլու կայարան: Գնացք չեր աշխատում, գծերը քանդել էին: Սկսեցինք ոտքով գնալ. շատ երեխաներ մնացին ճանապարհներին, իսկ մենք մի կերպ անցանք այդ դժվարությունները:

Մութն ընկավ: Քանդված, երկիհարկանի տուն կար, հողե հատակ ուներ: Նստեցինք գետնին: Մեր աղջկներից Անուշին թուրքերը բռնությանք փախսցին: Դաստիարակներից մեկն էլ թողեց գնաց, մնաց մեկը: Անգլիացի զինվորներ երևացին. մեզ շոշապատող թուրքերը հեռացան: Յասանք Թիֆլիս:

Մեզ դիմավորեցին Նավթուղ կայարանում: Տաք սուապ (ջրի կերակուր) տվեցին և տարան մի տուն, որտեղ լցվել էր ամբողջ գաղթականությունը, և մենք էլ մնացինք մի տաս օր: Եկանք թժշկական քննություն արեցին և բաժանեցին տարբեր որբանոցների վրա: Ինձ տարան Ծիրանավոր, որտեղ բուժեցին գլխիս վերքերը: Ապա՝ Միրզոյան որբանոց: Գեղեցիկ շենք էր՝ մրգի ծառերով, խաղողի թաղարներով: Բույրս Ներսիսյան վարժարանում էր, երկիհարկանի՝ նկուղով: Սովորում էինք մինչև 1919 թվականը: Ամերիկացին ուզեց մեզ տանել Ամերիկա, հայ կառավարությունը թույլ չտվեց: Անեն ինչ ընթանում էր խաղաղ: Բայց մի օր էլ իմացանք, որ մեզ որբերիս տեղափոխում են Ղարս (Կարս) քաղաք, որ ջարդված ու ավերված էր թուրքերի կողմից:

1919 թիվն էր, գարուն: 1920 թ. հոկտեմբերին թուրքը գրավեց քաղաքը, և մենք մնացինք գերի: Թուրքերին ճանապարհ ցույց տվող դավաճան հայերին կախեցին, քաշալացրել էին ու քաղաքով պտտեցրել: Սեպուհի գորքերը կարգին հագուստ չունեին: Յայկական գորքը չկարողացավ կայարանը պաշտպանել: Այստեղ ևս

սպանություններ և ավերումներ եղան. Էլ հայ Երեխային խշտիկի (սվինի) վրա առնել և մոր հետ ջուրը գտել, էլ տղամարդկանց շորերը հանել, վիզը կտրել, աչքերը հանել, էլ տկլոր մարդուն ձմեռվա սառնամանիքին գետը մտցնել, գենք պահանջել և այլն:

1920 թ. փետրվարին մեզ լցրին վագոնները և տեղափոխեցին Ալեքսանդրապոլի (Գյումրի) որբանոցները (Սևերսկի, Կազաչի պոստ):

1920-1927 թվականը, փոքր ընդհիջումներով, մնացինք ամերիկյան որբանոցում: Սովորեցի մինչև մանկավարժական տեխնիկումի չորրորդ կուրս: Լավ տիրապետեցի ասեղնագործության գաղտնիքները:

1927 թ. որբանոցի աղջիկներով խելքի տալով՝ որոշեցինք գնալ Սուխումի քաղաք՝ աշխատանքի: Բարումիում նավ նստելիս՝ Սուխում գնալու, պատահաբար հանդիպեցի Բաղդասար Պետրոսյանին, որը ինձ նման որք էր Մուշի Սոխագոմ գյուղից ու գրկվել էր ազգութարեկամից: Մենք լեզու գտանք, հարմարվեցինք. կազմեցինք ընտանիք: Մեզ հետ էր ապրում Բաղդասարի հորեղբօր տղա Առաքելը: 1936 թ. հունիսին ծանր հիվանդությունից հետո նա 28 տարեկանում վախճանվեց՝ խորը վիշտ պատճառելով մեզ: 1941 թ. ամուսնուս տարան բանակ (Երկրորդ համաշխարհային): Ամենամեծ տղաս 13 տարեկան էր, ամենափոքր՝ աղջիկս, 2 ամսվա: Պատերազմի այդ ամբողջ տարիներին իմ երեխաները շատ առողջ մնացին: Իսկ պատերազմից հետո երկու երեխաներս մահացան մի տարվա մեջ (1949-1950): Երկու տղաներս ու փոքր աղջիկս պետական համալսարան ավարտեցին Երևանում: Տղաներս մնացին Երևանում: Երկու աղջիկներս ամուսնացան: Բոլորից հետո իմ խեղճ ամուսնուց գրկվեցի (1971 թ.), որի հետ դեռ կյանքի երկար ճանապարհ կար անցնելու և հարցեր լուծելու: Դիմա մնացել եմ մենակ, ապրում եմ Բաթումում»:

Մարգարիտ Պետրոսյան  
1972 թ. Բաթում

## Մորս խոսքերից

«Կոտորած չի եղել, ո՞վ ասաց, որ չի եղել... Ահա դարսեցի Արփիկը (խնամին – Յ. Պ.), քրոջը տարել եմ, մոր մատները կտրել են մատանու համար»:

«Մենք չենք կոտորել....», – սատանա՞ն է կոտորել»:

«Ո՞վ է կոտորել, գետինը մտնեթք, հիմա ով կա, որ կոտորեթք, տարաք աղջիկներին, թրացրից»:

«Դայերը չունեմ պաշտպան: Զենք պիտի ունենան, սկզբից պիտի ունենային»:

## Բաթում քաղաքում Երկրից գաղթած մեր գյուղացիները

Բաթումը ծովափնյա քաղաք լինելով՝ սկսած XIX դարի 80-ականներից դարձել է հանգրվան Երկրից գաղթած հայերի համար, մանավանդ 1895-ից և 1915 թ. մղձավանջային կոտորածներից հետո:

Ես կթվարկեն միայն մեր գյուղից՝ Սոխագոնից, տարագրված ընտանիքներին, որոնց մասին խոսք չկա մեր պատմության գրքերում կամ գիտական աշխատություններում.

1. Յովիաննիսյան Մկրտիչ (Մճո): Երեխաները՝ Աղավնի, Յովիան, Դանիել, Աստղիկ: Կինը՝ Մարիամ, նույն գյուղից:
2. Աղամյան Սեդրակ (Սեթո): Երեխաները՝ Լուսիկ, Յովսեփ, Մկրտիչ, Ասյա: Կինը՝ Մարուս: Մարիամի եղբայրն է:
3. Յարությունյան Բողիկ (Բաղդասար): Երկու զավակ (աղջիկ, տղա):
4. Մանուկ: Երեխաները՝ Սարգիս, Ազնիկ, Արամ, Արշալույս: Կինը՝ Խանիկ:
5. Ստեփանյան Ռուբեն: Երեխաները՝ Լևոն, Եղիազար, Միսաք, Անդրանիկ և քոյրը: Կինը՝ Սիրան: Երկրորդ կնոջից չորս երեխա նաև:
6. Յարությունյան Մուշեղ: Երեխաները՝ Արմենակ, Արիստակ, Թամար: Կինը՝ Ֆերուայակ:
7. Յովիաննիսյան Մանուկ: Երեխաները՝ Գոհար, Լուսիկ, Մարիամ, Գևորգ, Սարգիս (Զառլիկ): Կինը՝ Նանուկս:
8. Ասատրյան Արտաշ: Երեխաները՝ Սուրեհիկ, Զորիկ: Կինը՝ Արուայակ:
9. Յակոբյան Թումաս: Երեխաները՝ Հայկ, Շուշիկ, Յրանուշ, Ռուբեն, Գրիգոր: Կինը՝ Եղիս:
10. Յակոբյան Մուքայել: Երեխաները՝ Աբեթ, Պողոս, Անդրանիկ, Սիրան, Օֆիկ: Երկրորդ կինը՝ Եղիս:
11. Յովիաննիսյան Բաղդասար (Բադո): Երեխաները՝ Վարդուշ, Թորգոմ, Խանիկ, Ավետիք: Կինը՝ Փերուզ:
12. Պետրոսյան Բաղդասար, Պետրոսյան Առաքել: Բաղդասարի Երեխաները՝ Յակոբ, Պետրոս, Արշալույս, Գասպար, Յեղինե, Գայանե: Կինը՝ Մարգարիտ:
13. Յլության Ռուբեն (Սուլո): Երեխաները՝ Երկու աղջիկ: Կինը՝ Մանուշակ: Երկրորդ Յամաշխարհային պատերազմից չվերադարձավ:
14. Սմբատ: Երեխաները՝ Վարդգես, Ազատ, Գևորգ: Կինը՝ Բեգոն:
15. Յնայակ: Երեխաները՝ Բաղդիկ, Մանուշակ: Առաջին Յամաշխարհային պատերազմից չվերադարձավ:
16. Սողոմոն-Սողոն, Երկու Երեխա՝ տղա, աղջիկ: Կինը՝ Զունիկ:



Բաղրասարի և Առաքելի հորեղբայր Բարսեղ  
Պետրոսյանը իր կնոջ՝ Մուշի քաղաքացի  
Ալմաստի հետ Ֆրեզնոյում, 1929 թ.



Բաղրասարը (մեջտեղում), Առաքելը  
և Սարգարիսը՝ ծեռքին Յակոբ որդին,  
Բաթում, 1928 թ.



Բաղրասարի եղբայր Առաքելը  
1936 թ. Բաթում



Բաղրասարը, Երկրորդ համաշխարհային  
պատերազմի ժամանակ



Բաղրասարի և Առաքելի հորաքրոջ  
աղջկը՝ Մարիամը (1951թ. Բաթում)



Մարգարիտը (Արփիկ թոռան հետ,  
Բաթում)



Մարգարիտի քոյր Անահիտը (Անիկը)



Անահիտի ամուսին Նավասարդը  
(զոհվել է Երկրորդ համաշխար-  
հայինում)



Անահիտի և Նավասարդի դուստր Էմման



Անահիտի և Նավասարդի որդին՝  
Հեռնարդը



Բաղդասարի և Մարգարիտի որդին՝ Պետրոսը



Բաղդասարի և Մարգարիտի դուստրը՝  
Արշալույսը



Բաղդասարի և Մարգարիտի որդին՝  
Գասպարը



Րադյասարի և Մարգարիտի  
դուստրերը՝ Յեղինեն և  
Գայանեն



Յորաքոյդ Մարիամի որդին՝  
Յովհաննեսը և Յակոբը



Յակոբը և որդին՝ Առաքելը

**Հակոբ Պետրոսյան, իմ հայրենազրկված ծնողների ողիսականը – Յուշագրության մեջ ներկայացված են Հայոց Մեծ եղեռնի ժամանակ հայրենի Մշո դաշտից ու Խնուսից տարագրված որբացած Երեխաների պատմության տիսուր դրվագները, որ ծնողներից ու հարազատ բնօրրանից զրկվելով ու կոտորածների արհավիրքներից անցմելով՝ ապաստան են գտնում Արևելյան Հայաստանում բացված Ամերկոմի որբանոցներում և ապա նոր բնակավայրում ստեղծում իրենց ընտանիքները:**

**Акоп Петросян, Одиссея моих лишенных родины родителей –**

1915

**Hakob Petrosyan , The Odessey of my expatriated parents –** The memoir presents some sorrowfull episodes from the life story of children who were orphaned and expatriated from their native land during the Great Genocide of Armenians in 1915. Deprived of their families and their fatherland, having suffered all the calamities of the massacres they found themselves in the asylums of AmerCom in Yerevan and Alexandropole,thus surviving and later starting their own families.

**Հակոբ Պետրոսյան – բանասիր. գիտ. թեկնածու, «Պատմություն և մշակույթ»  
գիտական համրեսի խմբագիր**

